ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 5, 1964 Общественные науки

ՍՏ. ԹՈՓՉՅԱՆ—ՇԻՐՎԱՆԶԱԴԵԻ ԷՍԹԵՏԻԿԱՆ

ԴԱ հրատարակչություն, 1963, 194 էջ

Ա. Տիրտերյանի «Շիրվանզադեի գրական տիպերի հանրագիտարանը», Հր. Թամրազյանի «Շիրվանզադեի դրամատուրգիան», «Շիրվանզադե, կյանքը և գործը» և ուրիշ բազմաթիվ աշխատություններ ու հոդվածներ մեծ գրողի ստեղծագործության շուրջը ստեղծել են իսկական իմաստով գիտական մթնոլորտ։ Իսկ այսօր այդ մթնոլորտը ինչ-որ չափով աշխուժանում է Ստեփան Թոփչյանի «Շիրվանզադեի էսթետիկան» գրքի շնորհիվ։

Սա հարցի անդրանիկ ուսումնասիրություն չէ, նշված և չնշված աշխատությունների հեղինակները, բնականաբար, անհրաժեշտության դեպքում, տարբեր առիթներով բազմիցս անդրադարձել են նաև Շիրվանզադեի գեղագիտության առանձնահատկություններին, ցույց են տվել դրանց մասնավոր ու ընդհանուր նշանակությունը, սակայն սա առաջինն է, որի մեջ թեման դարձել է առանձին և հանդամանալից ուսումնասիրության առարկա։

Լայն է Շիրվանզադեի մտահորիզոնը։ Նրա հետաքրքրությունները արտահայտվել են ոչ միայն գեղարվեստական ստեղծագործություններում, այլև բազմաթիվ հոդվածներում, որոնք ..ժվարությամբ կտեղավորվեն մի ամփոփ հատորի մեջ։ Գրականագիտություն, քննադատություն, թատրոն, դերասանական արվեստ, նկարչություն, հրապարակախոսություն, հասարակական կյանք, ահա այն ոլորտները, որոնց մասին Շիրվանզադեն գրել է արժեքավոր էջեր, գրել է նվիրվածությամբ, երբեմն սխալվել, բայց միշտ նայել է առաջադեմ սկզբունք ունենալով դարի, իր ժողովրդի և արվեստի բարձր պահանջները։ Այն մտքերը, նկատառումները, որոնք նա արտահայտել է իր հոդվածներում, փորձել և մեծ մասամբ հաջողել է իրականացնել գրական-գեղարվեստական ստեղծագործության մեջ։ Այս շատ կարևոր հանգամանքը մեծապես ընդարձակում է Շիրվանզադեի գեղագիտության սահմանները, մտքի դատողականությունը վերածում կենդանի, շարժուն էության։

Գրախոսվող հետազոտության առաջին և ամենամեծ արժանիքն այն է, որ այստեղ Շիրվանզադեի գեղագիտական հայացքները քննվում, մեկնաբանվում, իմաստավորվում են իրենց բազմակողմանի դրսևորման մեջ՝ ոչ թե այս կամ այն ասույթի ընձեռած հնարավորությամբ, որը ինչ-որ մի տեղ, բնականաբար, չի կարող խուսափել սուբյեկտիվիստական երանգներից, այլ՝ այդ ասույթի և գրականության, կյանքի հարաբերության դրսևորումով։ Սա. Թոփչյանը միշտ, գրեթե միշտ ելնում է արտահայտված մասնավոր տեսակետից և գնում դեպի դրա ընդհանրական նշանակությունը, միանգամայն ճշմարիտ ճանապարհ, որն անհամեմատ խորն է բացահայտում գրողի ու գրականության այս կամ այն խնդիրը։ Շիրվանզադեին է պատկանում այն միտքը, թե «մի Պուշկին, մի Տուրգենև անհամեմատ ավելի են ճոխացրել ռուսաց լեզուն, քան հազարավոր ռուս ուսուցիչները և պրոֆեսորները, որոնք ոճ չունին»։ Եվ գրքի հեղինակը ցույց է տալիս այս և նման տեսակետների ենթաբնագրային իմաստը. լեզուն և ոճը մասնավոր բնույթ չունեն, դրանք պայմանավորում են իրար և երկուսը միասին պայմանավորում են մի ամբողջ շարք գրական-հասարակական խնդիրներ, Շիրվանզադեն հետամուտ է «գրականության ազգային ոգուն», «ազգային գրական լեզվի տարածմանը», ժողովրդի կյանքում գրողի դերի հարցերին, պայքարում է «քարացած ավանդապահության, լեզվական հետամնացության, բարբառների անվերապահ օգտագործման դեմ, հանդես է գալիս ընդհանուր ազգային գրական լեզվի հաստատման նախանձախնդրությամբ, նպաստում է «ազգության ամրապնդման, միասնացման և բարձրացմանը» գործին, ձգտում է հայ գրականությունը պարփակ միջավայրից հանել համաշխարհային ասպարեզ և այլն, և այլն։ Այսպիսով, լեզվի և ոճի մասին անուղղակի, սղագրական համառոտագրությամբ և՝ սեղմությամբ արտահայտված կարծիքը դիտվում, մեկնաբանվում է ընդգծված անհատականությամբ գրողի, գրականության մի որոշակի ժամանակաշրջանի առաջքաշած և հասարակայնորեն իմաստավորված բազմաթիվ հարցերին ինչ-որ չափով պատասխան տալու միտումով։ Սա «Շիրվանզադեի էսթետիկան» գրքում միակ օրինակը չէ։

Հիրավի, անցյալ դարի հատկապես 90-ական թվականներից սկսած գրական լեզվի հարցերը դառնում են բուռն քննարկումների առարկա։ Այդ հարցերը՝ կապված գրականության մեջ բարբառների գոյության հետ, մեր օրերում էլ ինչ-որ չափով պահպանում են իրենց արդիականությունը, չնայած Ստ. Թոփչյանը անվերապահորեն հակառակն է հայտարարում. «մեղ համար վաղուց վճռված այս պահանջները...»։

Շիրվանզադեն այդ քննարկումների ամենագործունյա մասնակիցներից մեկն էր, եթե ոչ ամենագործունյան։ Նա, ինչպես ասում են, գրեց և ապացուցեց։ Նրա պատմվածքները և վեպերը, թատերկությունները և նոթագրությունները շունչ ու ոգի հաղորդեցին նաև միասնական գրական-գեղարվեստական լեզվի պաշտպանության դիրքերից գրված հոդվածներին։ Հատկանշական է այն հանգամանքը, որ ավելի քան կես դար առաջ Վահան Տերյանը տեսավ և մանավանդ գնահատեց Շիրվանզադեի տեսական և գործնական լեզվամտածողությունը, ոչ միայն գնահատեց, այլև դա հռչակեց զեկավար չափանիշ՝ գրական երիտասարդ սերնդի համար։ 1914 թ. կարդացած «Հայ գրականության գալիք օրը» մեծարժեք զեկուցման մեջ նա «ինչպե՞ս պետք է զարգանա հայ գրական-գեղարվեստական լեզուն» հարցին պատասխանեց ի օգուտ Շիրվանզադեի և ի վնաս Սունդուկյանի։ Ի տարբերություն գրական ուրիշ շատ հարցերի տրված պատասխաններին, Տերյանը այստեղ ամենից պակաս էր ծայրահեղ և ամենից ավելի էր ճշմարիտ։

Այս թվացող շեղումը ցույց է տալիս, որ «Շիրվանզադեի էսթետիկան» գրքում քննվում են գրողի գեղագիտության այնպիսի կողմերը, որոնք համընդհանուր հետաքրքրություն են ներկայացնում և չեն կորցրել իրենց արժեքը օրերի համար։ Գեղարվեստի դերը, «արվեստը արվեստի համար» տեսության մասին հայացքը, հասարակության քննադատության գեղարվեստական սկզբունքների մշակումը, աշխարհայացքի ձևավորման ընթացքը, թատրոնի և ժողովրդի փոխհարաբերությունը («թատրոնը պետք է սերտ կապված լինի ժողովրդի հետ և այնտեղ հաստատի իր գոյության հիմքը, բայց ժողովրդի ճաշակը չէ, որ պետք է ուղղություն տա թատրոնին, այլ թատրոնը պետք է կրթի ժողովրդին»), բուլվարային գրական երկերի դեմ պայքարը, դրամատիկական գործողության և հոդերանության առընչությունները՝ «Գեղարվեստը և իրականությունը» բաժնում, գեղարվեստի և հասարակական կյանքի փոխազդեցությունը, իրականության գեղարվեստական արտացոլման խնդիրները, ռեալիզմը որպես ճշմարտության չափանիշ՝ «Ռեալիզմը տեսության մեջ» բաժնում, ճշմարիտի և գեղեցիկի կապը, դրանց տարբեր մեկնաբանությունները՝ «Գեղեցիկը և ճշմարիտը» բաժնում, պատմության և գրականության ընդհանրությունները, ազգային մշակույթի յուրահատկությունները՝ «Պատմությունն ազգային գրականության կերտող» բաժնում, Շիրվանզադեի վերաբերմունքը «իմվոլիզմի, իմպրեսիոնիզմի և 20-րդ դարի արվեստի ու գրական ուղղությունների հանդեպ «Գեղարվեստի նոր ուղղությունները և նրանց ապագան» բաժնում, ահա այն խնդիրները, որոնք ավելի կամ պակաս հետևողականությամբ ու չափով ի հայտ են գալիս այժմ ներկայացվող ուսումնասիրության էջերում։

Քանի որ սովորության ուժով գրախոսությունը սկսվեց և շարունակվում է առավելությունների ցուցադրմամբ, նշենք գրքի մի ուրիշ առավելությունը ևս։

Ստ. Թոփչյանը Շիրվանզադեի գեղագիտական հայացքները հետազոտել է մի կողմից դրանց ձևավորման որոշակի հանգամանքներում (դարավերջի և դարասկզբի գրական-հասարակական կյանք, քննադատական մթնոլորտ, մեռնող սկզբունքներ և ծնվող հավատամքներ, արվեստագետի անհատականություն, փոխազդեցություններ և այլն), մյուս կողմից՝ պատմական հեռավորությունից, գրականությանն ու արվեստին այսօր առաջադրվող պահանջների դիտակցությամբ։ Առաջինը հնարավորություն է ստեղծել, որ այս կամ այն խնդիրը ներկայացվի իր բնական տեսքով, ոչ ավելի, ոչ պակաս, իսկ երկրորդը նպաստել է, որ կարևոր նշանակություն ունեցող հարցերին գրողի, թեկուզ և մեծ գրողի ամեն մի պատասխան չընդունվի անվերապահորեն, որպես բացարձակ ճշմարտություն։ Այս վերջին հանգամանքով էլ պայմանավորված է գրքի քննադատական ոգին։

Հայտնի են Շիրվանզադեի գնահատականները իմպրեսիոնիզմին և Զոլայի «Երազանք», «Մարդ-դազանը», «Ջախջախում», «Նանա» և ուրիշ վեպերին։ Նա արհամարհանքով է վերաբերվել 1874 թ. Փարիզում հռչակված, այնուհետև համաշխարհային տարածում ստացած գեղանկարչական ուղղությանը, դա որակել է «ոչ-դպրոց», իր ռեալիզմի բացահայտ դիրքերից չի նկատել դրա ռեալիզմի թաքնված դիրքերը։ Իսկ Զոլայի ստեղծագործությունը համարել է բուրժուական «ցեխ հասարակության կրքերի» արձագանք, «անբարոյական կյանքի պահանջներին» տուրք տալու արդյունք, լժանագին հաջողություն, նատուրալիզմը, որպես գրական ուղղություն, բացատրելով լոկ անառակ բարքերի և գործողությունների բացահայտ նկարագրությամբ։

Ստ. Թոփչյանը չի համաձայնվում այս կարծիքների հետ, ցույց է տալիս իմպրեսիոնիզմի և Զոլայի վեպերի հասարակական իմաստն ու նշանակությունը, որով դրանք նոր ուղի են բացում արվեստում և գրականության մեջ։

Սակայն Շիրվանզադեն երկար չմնաց սխալ պատկերացումների ոլորտում։ Նա միշտ որոնող արվեստագետ էր, և շուտով վերանայեց իր նախկին հայացքները։ «Շիրվանզադեի էսթետիկան» գրքում հաջողությամբ երևան է հանված գրողի հոգևոր այս շրջադարձը։ Նա արդեն ոչ միայն ըստ արժանվույն գնահատում է Մանեին և Մոնեին, այլև իմպրեսիոնիզմի մասին գրում է մեր օրերի համար էլ իրենց թարմությունը չկորցրած տողեր. «...այն արվեստն է, աղղեցիկ, որ կյանքի արտագրությունն է։ Ըստ իս ամենահանճարեղ դասականները ամենախոշոր ռեալիստներն են... Ռեալիզմն ինքնաստինքյան պարունակում է իր մեջ էմպրեսիոնիզմը, և սխալ է կարծել, որ անընկալը կարող է տպավորվել մարդու հոգու վրա»։ «Ճշմարտության հերոսը», «Զոլան դեպի պանթեոն», «Ճշմարտության հաղթանակը» հոդվածներում վերարարժեքավորվում է նաև ֆրանսիացի գրողի ստեղծագործությունը. «Ոչ ոք այնչափ բարեխղճորեն և հանճարեղ չի ուսումնասիրել աշխատավոր դասակարգի կացությունը, որչափ Զոլան»։

Փառքն ու հոչակը փոքր ի շատե չխանգարեցին Շիրվանզադեին արմատապես փոխելու իր մոլոր հայացքները։ Ստ. Թոփչյանը, սրանով իսկ, բացահայտում է մեծ գրողի գեղագիտության նաև անընդհատ զարգացման կորագիծը, որով նա բողոքում է ամեն տեսակ դոգմատիզմի դեմ։

Իհարկե, «Շիրվանզադեի էսթետիկան» գրքի ակնհայտ արժեքը նշված առավելություններով չի վերջանում, սակայն չնշված առավելությունների այստեղ ներկայությունը անգամ չի կարող մոռացության տալ մի քանի անճշտություններ ու թերացումներ, որոնցից հատկապես Երկուսի մատնանշումն ավելորդ չէ։

Հեղինակը շատ և հետևողականորեն է խոսում Ալեքսանդր Շիրվանզադեի, այսպես կոչված, էսթետիզմի մասին։ Առարկությունը վերաբերում է ոչ թե շատին ու հետևողականությանը, այլ այդ էսթետիզմի գոյությանը գրողի գեղագիտական հայացքների մեջ։ «Գեղարվեստի և կուսակցական գաղափարների» անջրպետվածության միտքը, «ստեղծագործական ոգու» և «դեղեցիկ ճաշակի» առանձնացումը և նույնիսկ ստեղծագործության «գեղարվեստական արժեքի» գերագնահատումը գաղափարների համեմատությամբ՝ անհրաժեշտ չափով չեն հիմնավորում Շիրվանզադեի էսթետիզմը։ Այդ հիմնավորումը չի իրականանում նաև «Շիրվանզադե-էսթետ և Շիրվանզադե-ռեալիստ միջև եղած հակասությունների շնորհիվ, որը ինչ-որ մի կարևոր տեղ գեղագիտական հակասությունից վերաճում է գրականագիտական հակասության. «հասարակական ո՞ր խավերին է նա (Շիրվանզադեն—Ն. Ա.) անվանում «ստոր, գոեհիկ ամբոխ», ո՞ւմ է ցանկանում ծառայեցնել գեղարվեստը, ինչպե՞ս է գնահատում գեղարվեստի դերը հասարակ ժողովրդի կյանքում և արդյո՞ք ժողովրդին նայում է էսթետի արհամարհանքով» (էջ 12), հարցեր, որոնց հանգամանալից մշակված և փաստերով հիմնավորված պատասխանները խոսում են ի վնաս գրողի էսթետիզմի։ Ինչպես համապատասխան տեղում ասվեց, Շիրվանզադեի գեղագիտական հայացքները մեծապես հառնում են նաև նրա գրական-գեղարվեստական ստեղծագործությունների մեջ։ Այդ ստեղծագործությունները ամենամիտումնավոր քննության դեպքում անգամ էսթետիզմի տարրեր չեն ցուցադրում։ Դժվար չէ նկատել, որ այդ էսթետիզմի հայտնության պատճառը գրական-գեղարվեստական ստեղծագործությունների պատահական, թե անպատեհ անտեսումն է գրքի համապատասխան հատվածում. պատճառ, որը տեղ-տեղ դառնում է հետևանք։

Ստ. Թոփչյանը երբեմն անհրաժեշտության չափով է դիմել Շիրվանզադեի գեղարվեստական հարուստ ժառանգությանը, երբեմն՝ բավարար չափով, իսկ երբեմն էլ բոլորովին չի դիմել, երբ դրա անհրաժեշտությունը կա։

Այսպիսով, «Շիրվանզադեի էսթետիկան» ուսումնասիրությունը իր վերընթաց և վարընթաց ուղղվածությամբ ցույց է տալիս ու հաստատում մեծ ռեալիստի գեղագիտության նշանակությունը մեզանից առաջ և մեր օրերի համար։

Ն. ԱԴԱԼՅԱՆ